

և որ իրոք պետք է հնացած, անհասկանալի բաները փոխարինել ժամանակակից համարժեք բառերով, արդիականացնել արտասանությունը, ճշտել կետագրությունը, Ռոուզը գտնում է, որ պետք է շնորհակալ լինել Մամուլյանից բնագիրը ճաշակով կրճատելու համար, քանի որ այն շափազանց երկար է ներկայացման համար և միշտ էլ կրճատվել է բեմագրվելիս, միայն ավելի կոպիտ և անզգույշ:

Համլետի տարիքի վերաբերյալ Մամուլյանի կարծիքը նույնպես Ռոուզը համարում է միանգամայն ճիշտ, այդ բանը հաստատելու համար Ռոուզը բերում է մի պատմաբանի փաստարկը: Ի դեպ այս առիթով նա հետաքրքրական փաստարկներ է բերում նաև Շեքսպիրի տարիքի և սոնետների գրման տարեթվի վերաբերյալ:

Իր հոդվածը նշանավոր շեքսպիրագետն ավարտում է հետևյալ խոսքերով. «Պարոն Մամուլյանը կարող է վստահ լինել, որ մեծ թվով աղյուսներ կստանա այն մարդկանցից, որոնք բավական հիմար են, որպեսզի կարողանան հասկանալ, թե ինքը ինչ գործ է կատարել մեզ համար: Բայց ես հուսով եմ, որ նա կարճամարտի նրանց անհասկացողությունն ու բիժամտությունը և առաջ կտանի Շեքսպիրին իսկպես ծառայություն մատուցելու իր ծրագիրը՝ հաղթահարելով այն խոշորոտները, որոնք կան Շեքսպիրի և ժամանակակից հանդիսատեսի միջև: Եթե պարոն Մամուլյանը «Համլետի» օրինակով շարունակի մեզ մատուցել շեքսպիրյան այլ պիեսների նույնքան բավարար տարբերակներ՝ իր զգայուն և ճարտար խմբագրություններով, որ շատ քիչ մարդիկ են ի վիճակի կատարելու, դա կլինի մեր ժամանակներում Շեքսպիրին մատուցված իրոք որ մեծադույն ծառայությունը»:

## ՍՈՒՐԵՆՅԱՆՑԸ ՇԵՔՍՊԻՐԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ ԹԱՐԿՄԱՆԻՉ

### Հաղորդում Բյուրակն Անդրեասյանի

«Վինձորի զվարճասեր կանայք» կատակերգությունը Շեքսպիրի լավագույն ստեղծագործություններից է, բայց և այնպես դա չի մտել շեքսպիրյան այն գործերի շարքը, որոնք զարգարել են հայոց թատրոնի բեմը, դարձել նրան հարազատ:

Այդ կատակերգությունը, որքան մեզ հայտնի է, մի անգամ է ներկայացվել հայ բեմում՝ 1939 թվականին Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, Տիգրան Հախումյանի՝ ուսուցիչից կատարած թարգմանությունը:

Այդ թարգմանությունը չի տպագրվել: Առաջին անգամ «Վինձորի զվարճասեր կանայք» կատակերգությունը հայերեն լույս է տեսել 1953 թվականին Շեքսպիրի «Ընտիր երկերի» հայերեն եռահատոր հրատարակության II հատորում: Դա բնագրից հաշիկ Դաշտենցի կատարած թարգմանությունն է:

Սակայն Տ. Հախումյանի թարգմանությունը առաջինը չէ և ոչ էլ Դաշտենցիներ՝ առաջին թարգմանությունը բնագրից: Կատակերգության անդրանիկ թարգմանությունը բնագրից կատարել է Վարդգես Սուրենյանցը:

Այս թարգմանության գոյությունը մասին գրականության մեջ նշվել է հետևյալը. «Տեղեկությունների համաձայն, — գրում է Վ. Քերզրաշյանը, — Վ. Սուրենյանը թարգմանել է «Արքա կիր» և «Վինձորի ուրախ կանայքը», վերջինիս մասին մենք իմանում ենք Սևումյանի մի նամակից ուղղված Հովհ. Թումանյանին: Այդ նամակում Սևումյանը

խնդրում է մեծ բանաստեղծին իրեն հանձնել Վ. Սուրենյանի թարգմանությունները, որոնք նկարիչը թողել էր Քումանյանի մոտ՝ Սևուսյանին հանձնելու համար»<sup>1</sup>։

Կատակերգության Սուրենյանցի թարգմանությունը (թարգմանչի ձեռագրով) այժմ պահվում է Երևանի շերտպիրյան գրադարանի ձեռագրական բաժնում։

Սուրենյանցը սովորություն ուներ իր թարգմանությունները մարտադիր արտադրել, ներկա ղեկավարում պահպանվել է միայն սեպտեմբեր՝ թարգմանչի բաղամսիով ուղղումներով, Հավանական է, Սուրենյանցն իր թարգմանությունը չէր ևլ բառարկել և պահպանվածը միակ ձեռագիրն է։ Ձեռագրի վերջում կարդում ենք՝ «1910. Ս. Պետերբուրգ»։ Նշանակում է, որ «Վիեննայի ղվարճասեր կանայք» կամ Սուրենյանցի թարգմանությունը՝ «Վիննայի ուրախ կանայք» կատակերգությունը նկարիչը թարգմանել է «Ռիչարդ III-ը» (1883 թ.), «Հուլիոս Կեսարը» (1892 թ.), թերևս նաև «Աբրա Լիրը»<sup>2</sup>, թարգմանելուց հետո, այսինքն՝ երբ շերտպիրյան երկերի թարգմանության բավական փորձ ուներ։ Այս հանգամանքը նշում ենք հատկապես այն պատճառով, որ կատակերգության թարգմանությունը առաջին հայացքից կարող է թվալ ավելի անկատար, քան վերահիշյալ պիեսների թարգմանությունները։

Բանն այն է, որ Սուրենյանցը այս կատակերգության թարգմանությունը կատարել է յուրովի մտանցմամբ՝ իր նախորդ, ինչպես և հաջորդ թարգմանությունների համեմատ։ Շեղվելով ժամանակի գրական հայերենից, որով նա թարգմանել է Շերտպիրի մյուս գործերը և ուրիշ հեղինակների մի շարք երկեր՝ Սուրենյանցն այս ղեկավար լեզվական ատաղձի օգտագործման հետաքրքրական փորձ է կատարել, դիմել է հայերեն բարբառների (բառ սրում, տարբեր բարբառների) բաղամսիով ձևերի օգտագործման։

Կատակերգության բնագրի լեզուն, համեմատած շերտպիրյան մյուս գործերի լեզվի հետ, ավելի ժողովրդական է, իսկ հերոսներից երկուսի լեզուն տիպականացված է ժամանակի գրական անգլերենից կատարված մի շարք շեղումներով։ Դրանցից մեկը ունյացի (վալիսեցի) քահանա Իվինոն է (կամ Էվանսը), որի լեզվում նկատելի է Ունյաի բարբառը (օրինակ, ձայնեղների խլայցումը), մյուսը Փրանսիացի Կալուսն է, որը անգլերեն խոսում է Փրանսիացու համար բնորոշ սխալներով (Վի-ի փոխարեն արտասանում է ձ և այլն)։

Սուրենյանցը լինելով ախալցխացի, Իվինսի խոսքը թարգմանել է իր հայրենի բարբառով, մասամբ օգտագործելով նաև ալլ բարբառային ձևեր. «Լավ չէ՛, օր բարեկամ բլլիք, թուրք թողնեք՝ չէ՛ թե սրով, սիրով պրծնիք, էտե ես իմ գլխուս մեջ մե ուրուշ բաղդատում մ՛ալ ունիմ, կըլլի, օր անով ալ խելոք բանրմ էնիք»։ Ընելս Աննային՝ Փեճին աղջկանը համար է։ Տեսքով, պոլով-պուտով անբարտ աղջիկ մ՛է»։ Այսպես է խոսում ունյացի քահանան Սուրենյանցի թարգմանությունը։ Նրա խոսքի մեջ տեսնում ենք բարբառային ձևերի ուղղակի պատճենավորում, գրական բառերի բարբառային փոխարինում»։

Ահա մի նմուշ Փրանսիացի Կալուսի խոսքից. «Է՛նչ բորդ ունի պարիկեշտ մարթ իմ սելնյաք, նա շե պարիկեշտ մարթ, որ իմ սելնյաք միտալ»։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, ոչ թե բարբառն է իշխում, ալլ գրական լեզուն է դիտավորյալ խաթարված։ Շերտպիրյան մյուս հերոսների թարգմանական խոսքը երկու տեսակի է. ոչ աղ-

1 Վ. Ռեդիչի բաշխան, Շերտպիրի հայերեն, Երևան, 1956, էջ 100։

2 Թարգմանության տարեթիվը հայտնի չէ։

նըվական հերոսները (Շալո, Սլենդեր, Քվիթլի և այլն) խոսում են բարբառային, զխա-  
վորապես արարատյան բարբառի մի շարք բառերի ու ձևերի օգտագործմամբ, զրական  
լեզվի բառերի աղավաղմամբ. «Պարոն Փեճ, ուրախ եմ ձեր տեսութանը, ողջ ըլնի՞ք,  
առողջ ըլնի՞ք. կուզեի, որ էն որսը ավելի լավն ըլներ՝ նա լավ չէ դարկած», կամ՝  
«Գաղտնի խորհրդարանին պտի այտնեմ արարմունքը»: Այսպես է խոսում Սուրենյանցի  
թարգմանությունը Շալոն՝ անգլիացի հաշտարար դատավորը:

Այս խմբի հերոսների լեզվում գտնում ենք նաև ըսեց, ընտեղ, ստեղ (էստեղ,  
էրտեղ-ին դուգահեռ), երբամ, մեճծ, պոռչ, անկամ, ֆոտ (հոտ), վրեն, աշխարհք և  
շատ ուրիշ բարբառային բառեր ու ձևեր, Կան զրական բառերի այսպիսի աղավաղում-  
ներ՝ Խխրվի (տխրել), օրիվորդ (օրիորդ), քիկնեպան (թիկնապահ), աժղամառ (աժ-  
ղահա) և այլն: Գրական բառերի բյուռն ածանցը դարձել է բուռն կամ քեն, ինչպես՝  
անճնավորարուռն, աբավարուռն, ըմբոստուրեն, ցանկուրեն և այլն:

Հ-ով սկսվող բառերի այդ հնչյունը ընկած է, ինչպես՝ այտեղ (հայտեղ), ամառ-  
ձակ (համարձակ), ույս (հույս) և այլն: Բառերի աղավաղումների մի մասը կապ չունի  
բարբառայնության հետ:

Սուրենյանցի թարգմանության մեջ հերոսների մյուս խումբը՝ ազնվականները  
(Ֆալստաֆ, Ֆորդ, Խիկին Ֆորդ և այլն) հիմնականում խոսում են ժամանակի զրա-  
կան հայերենով, թեև նրանց լեզվի մեջ էլ քիչ չեն բարբառային բառեր ու ձևերը, ինչ-  
պես, օրինակ, վրեղ, կեիկ, էս, էղ, էն, էպպես, ըլնես, վախիլ մի և այլն:

Եվ այսպես, կատակերգության բնագրում եղած ժողովրդական խոսքի երանգը, նրա  
շնորհիվ ստեղծվող աշխուժությունը հայերեն թարգմանության մեջ պահելու նպատակով  
Սուրենյանցը դիմել է հայ բարբառների, ժողովրդական խոսքի տարբեր լեզվամիջոցների  
առատ օգտագործման: Այս հնարանքը թարգմանչին միայն տեղ-տեղ է հաջողվել,  
օրինակ ունլսցի Իվենսի սխալ արտասանած Good worts-ը (փոխանակ՝ words) ծաղ-  
րելու համար Ֆալստաֆը ստում է՝ Good worts, good cabbage! (բառացի՝ «Լավ խոս-  
քեր, լավ կաղամբ»): Սուրենյանցը սրա դիմաց գրել է հայ ժողովրդական «եռոսքը բարի,  
խոտ ու դարի» արտահայտությունը: Կամ անգլերեն tut (անհամբերություն) բառը, որը  
բացականչական նշանակություն ունի և արտահայտում է անհամբերության կամ թեթև  
բարկության նման մի բան, թարգմանել է «էլ մի ասիլ» հայերեն ժողովրդական ար-  
տահայտությամբ, մի այլ տեղ Let me see thee froth and lime (բառացի՝ թող ես  
քեզ տեսնեմ (զարեղուրը) փոփրացնելիս և գողանալիս) փոխարեն օգտագործված է  
«Որքան կուզես փոփրվիր ու քրքրվիր դարեջրի մեջին» և այլն: Կան հայ ժողովրդական  
խոսքը հաջողությամբ օգտագործելու և ուրիշ օրինակներ: Բայց ավելի հաճախ բարբառի,  
մանավանդ խիստ բարբառային բառերի ու ձևերի օգտագործումն ու զրական բառերի  
աղավաղումը նպատակասլաց չեն դարձել: Շատ դեպքերում ձևը չի բերվել բնագրի  
խոսքային աշխուժությունը և ավելորդ բարբառայնություն է ստեղծվել: Դրան զուսմար-  
վում է այն, որ ժամանակի զրական լեզվի մեջ XIX դարից դեռևս պահպանվում էին  
զրաբարյան և բարբառային այնպիսի տարբեր, ինչպես՝ սորա, դորա, նորա, նոբա,  
վերա, դստեց, կամ՝ իմ սերս, իմ անունս, իմ պատճառովս, մարդիկը, ժամանակիցը,  
մախիցը, երեսիցը, ծխերովը, կերպարանովը և այլն, որոնք բնորոշ են նաև Սուրեն-  
յանցի լեզվին և հասկանալի է, որ տեղ են գտել այս թարգմանության մեջ:

Ի դեպ, նշենք, որ կատակերգության ոտներեն թարգմանությունների մեջ բար-  
բառայնությունը բացակայում է, միայն ֆրանսիացի Կալուսի խոսքում կան ոտներեն

բառերի որոշ ազալազումներ (օրինակ, Տ. Շչեպկինա-Կուպերնիկի թարգմանության մեջ), իսկ երբեմն այդ էլ շափազանց աննշան է (օրինակ, Պ. Վեյբրեդի թարգմանության մեջ): Կատակերգության վերջին թարգմանիչ Ն. Գաշանցը բարբառային ձևերին տուրբ չի տվել: Միայն Իվինսի և Կալստի տեքստում որոշ բառերի ազալազում է թույլ տվել: Աուրենյանցը բավական աշխատանք է կատարել իր թարգմանության վրա և զմիշտ չէ նկատել, որ բնագրի մի շարք նբբություններ նա ճիշտ է հասկացել և արտահայտել: Նշենք նաև, որ բնագրի բոլոր շափածո հատվածները թարգմանված են շափածոյով:

## ՄԻ ՆՈՐ ՏՎՅԱԼ

### Հաղորդում Վլադիմիր Վաբգանյանի

«Համլետի» հայ թարգմանիչների թիվը հետզհետև բնդաչնվում է: Մինչև վերջին ժամանակները հայտնի էին միայն հետևյալ թարգմանիչների անունները՝ Ա. Տետևյան, Ս. Արծրունի, Ավ. Եզեկյան, Հ. Մասեհյան, Գ. Բարազյան, Ըստ Վ. Բերդրաշչյանի թարգմանել է Ա. Կասկանդիրյանը ևս: Այս շարքը վերջերս լրացավ նաև մի այլ թարգմանությանը (ոչ ամբողջական), որ հայտնաբերվել է Մատենադարանում՝ Գարբիել Պատկանյանի թղթերում: Այսպիսով, ուրեմն, «Համլետը» հայերեն թարգմանելու լսթ փորձ է արվել: Այդպես է հայտնի մասնագիտական գրասենյակները: Այս տվյալների վրա տվելուանում է մեկը ևս, որի մասին մինչև հիմա ոչ մի հիշատակություն չէ եղել:

Ատեփանոս Մալխասյանը Շեքսպիրից թարգմանել է երկու դործ, մեկը՝ «Էլիր թագավորը», մյուսը՝ «Մակբեթը»: Առաջինը լույս է տեսել 1888-ին Պետերբուրգում, երկրորդը՝ 1892-ին, Թիֆլիսում: Մեր հաջորդ հաղորդումով հանդամանորեն կանգադառնանք. «Մակբեթի» թարգմանության ապագրության հետ կապված մանրամասնություններին: Իսկ հիմա շտապում ենք մասնագետների ուշադրությունը հրավիրել մի նոր տվյալի վրա:

Աս. Մալխասյանի մի նամակից երևում է, որ նա ևս թարգմանել է «Համլետ», էթև ոչ ամբողջությամբ, այդ գոնև մի մասը, հավանաբար սկիզբը: «Այժմ,— ասված է այդ նամակում,— թարգմանում եմ «Համլետը»:

Նամակը, որից մեջբերում կատարեցինք, գրված է 1882-ին: Այսպիսով, ուրեմն, պարզ է դառնում թարգմանության թվականը: Բացի այդ՝ նույն նամակում գրված է, որ «Համլետը» թարգմանում է նույն շափով և ուղղությամբ ինչ-որ «Մակբեթը»: Այդ ասելով թարգմանիչը նկատի ունի երկու հանգամանք. 1) ողբերգության շափածո հատվածները թարգմանված են հայկական տաղաչափությամբ. 2) թարգմանության մեջ գործածված են ցուցական դերանունների իզական սեռերը՝ սե, դե, նե:

Իր թարգմանությունը Մալխասյանը ավարտել է, թև ոչ, հայտնի չէ: Անհավանական չէ, որ անավարտ թողած լինի, նկատի ունենալով գրական շրջանների քննադատական վերաբերմունքը իր թարգմանական սկզբունքների նկատմամբ:

Այսպիսով, «Համլետի» հայերեն թարգմանությունների պատմությունը, որ դեռ գրված չէ, բայց երևի մի օր գրվի, հարստանում է մի նոր տվյալով: